Հավելված 5
« ՄԱԱՇՁԲ-2018/3-ԵՊԲՀ» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

«ԵՊԲՀ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՄԱԱՇՁԲ-2018/3-ԵՊԲՀ»

ք. Երևան «05» «04» 2018թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ, ի դեմս ռեկտոր՝ **Ա.Ա.Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Լռկատռր» ՓԲԸ**-ն, ի դեմս **տնօրեն Ա.Խաչատրյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է անվտանգության սարքերի տեղադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **813000 (ութ հարյուր տասներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	**«Լոկատոր» ՓԲԸ**
Հիմնադրամ	**Հասցե՝ՀՀ,ք.Երևան, Կոմիտասի 36ա-22**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**ՀՎՀՀ 00095651**
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ**
հ/հ 11500166513800	**Հ/Հ՝ 1930011489910100**
ՀՎՀՀ 01503448	**տնօրեն՝**
Ռեկտոր՝Ա. Ա. Մուրադյան	**Ա. Խաչատրյան**
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«05» «04» 2018 թ. կնքված
***«ՄԱԱՇՁԲ-2018/3-ԵՊԲՀ»** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
1	45231215	**1. Օգտագործվող հասկացությունները** - Պահնորդների վերահսկում – պահնորդի աշխատանքային կարգապահության և անվտանգության հսկման նպատակով հանձնված և վերահսկման համակարգին միացված Սարքավորումների միջոցով պահնորդի վերահսկման հնարավորություն: - Պահնորդների վերահսկման ծառայություններ – վերահսկման համակարգում Պատվիրատուի պահնորդների շարժի մասին տեղեկատվության արտացոլման ապահովման գործունեություն: - Վերահսկման համակարգ– Կատարողի համակարգչային սարքավորման	դրամ	813000	813000	1	**ք. Երևան, Կորյուն 2**	Համակարգի ներդրումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում Սարքերի ամսական վարձակալությունը մինչև 2018 թվականի դեկտեմբեր

		(սերվերի) մեջ տեղադրված ծրագրային ապահովում: - Սարքավորում – Պատվիրատուին վարձակալությամբ հանձնված, պահնորդի մոտ գտնվող և Կատարողի համակարգչային սարքավորմանը (սերվերին) տեղեկատվություն հաղորդող թվով 12 սարք («iButton RT») : - IButton – նույնականացման էլեկտրոնային բանալի - Պատվիրատուի հանձնած թվով 110 (հարյուր տաս) նույնականացման էլեկտրոնային բանալի: Ծառայության ավարտին բանալիները Պատվիրատուի կողմից վերադարձման ենթակա չէն: - SIM քարտ – վերահսկման համակարգին Պատվիրատուի Սարքավորման հասանելիությունը ապահովող քարտ: **2. Աշխատանքի նկարագիրը** Պահնորդների աշխատանքի արդյունավետ վերահսկման համակարգ , որը թույլ է տալիս իրական ժամանակում տեսնել նշված կետ այցելության տվյալները, հետևել պահնորդների աշխատանքին՝						

		բարձրացնելով արդյունավետությունը: Ծրագրային և տեխնիկական ապահովումը՝ - Սարք «iButton RT» - Ծրագրային ապահովում համակարգիչների և պլանշետների համար Պահնորդի շրջայցի ճանապարհին ամրացվում են Ibutton – ներ : IButton – ները հնարավոր է ամրացնել ցանկացած վայրում՝ բաց տարածքներում, շինությունների ներսում և այլն: Պահնորդը շրաջայցի ժամանակ «IButton RT» սարքը հպում է Ibutton – ին և այդ տվյալը իրական ժամանակում արտացոլվում է ծրագրում:						

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

3. Աշխատանքի կատարման կարգը

3.1. Սույն Կանոններով նախատեսված աշխատանքները կատարվում են Կատարողի պայմաններին համապատասխանող և Պատվիրատուի մուտ արտադրողի ցուցումներին համապատասխան տեղադրված Սարքավորման առկայության դեպքում:

3.2. Աշխատանքներ կատարելու վերաբերյալ Պայմանագիր կնքելուց հետո Պատվիրատուին տրվում են վերահսկման համակարգից օգտվելու համար անհրաժեշտ տվյալներ՝ ինտերնետի միջոցով Կատարողի սերվերային սարքավորման մեջ տեղադրված վերահսկման համակարգից օգտվելու համար:

3.3. Մոնիտորինգային համակարգից արդյունավետ, ինչպես նաև որակյալ կերպով օգտվելու համար Պատվիրատուն պետք է ունենա Կատարողի կողմից սահմանված տեխնիկական պահանջներին բավարարող համակարգիչ և ինտերնետ կապ:

3.4. Օբյեկտներում նույնականացման բանալիների տեղադրումը (մոնտաժումը) կատարում է Պատվիրատուի կողմից:

3.5. "Locator Security" համակարգը և նրանում ներկայացված ՀՀ և նրա առանձին տարածքների թվային քարտեզը հանդիսանում է «Լոկատոր» ՓԲԸ-ի սեփականությունը և հեղինակային իրավունքի առարկան:

3.6. Կատարողը իրականացնում է Պատվիրատուին տրամադրվող սարքավորման(երի)՝ Պահնորդների վերահսկման համակարգին միացումն ու թույլատրում մուտք դեպի համակարգ՝ security.locator.am ինտերնետային սերվերի միջոցով:

3.7. Պատվիրատուին տրամադրել խորհրդատվություն մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

3.8. Կատարողը մոնիտորինգային համակարգի պրոֆիլակտիկ և այլ ռեգլամենտային աշխատանքների ընթացքում կարող է դադարեցնել մատուցվող Ծառայությունները:

3.9. Արգելվում է համակարգի կամ նրա մաս կազմող տարրերի ցանկացած ձևի կրկնօրինակումը, տեխնոլոգիական զննումը, փոփոխումը և այլ արտադրանքի ստեղծումը՝ հիմնված համակարգի, նրա մասերի կամ նրանում տեղ գտած տեխնիկական լուծումների վրա:

3.10. Արգելվում է համակարգում ներկայացված թվային քարտեզների կամ նրա մաս կազմող տարրերի ցանկացած ձևի օգտագործումը համակարգից դուրս:

3.11. Արգելվում է համակարգի, համակարգի մաս կազմող տարրերի, համակարգում ներկայացված թվային քարտեզների կամ նրա մաս կազմող տարրերի ցանկացած ձևի օգտագործումը, բացի սույն Կանոններով ակնհայտ թույլատրված դեպքերի:

3.12. Արգելվում է "Locator Security" համակարգի օգտագործման իրավունքի փոխանցումը ցանկացած անձի:

3.13. Համակարգից օգտվելով Պատվիրատուն իրավունք ձեռք չի բերում համակարգի, համակարգի մաս կազմող տարրերի, համակարգում ներկայացված թվային քարտեզների կամ նրա մաս կազմող տարրերի նկատմամբ:

3.14. Համակարգում ներկայացված թվային քարտեզների նկատմամբ բոլոր իրավունքները պատկանում են «Լոկատոր» ՓԲԸ-ին և այլ իրավատերերի՝ եթե այդպիսիք կան:

4. Պատվիրատուի պարտականությունները

4.1 Պատվիրատուն պետք է աշխատանքների կատարման շրջանակներում Կատարողի կողմից տեղադրված սարքավորումները օգտագործի միայն ըստ նպատակային նշանակության: Սույն Պայմանագիրը լուծվելու դեպքում սարքավորումները սարքին վիճակում վերադարձվում են Կատարողին 10 օրվա ընթացքում:

4.2. Պատվիրատուն պետք է ապահովի կատարվող աշխատանքների համար օգտագործվող սարքավորման(երի) սարքինությունն ու պահպանությունը:

4.3. Պատվիրատուն պետք է Կատարողին անհապաղ տեղեկացնի սարքավորման կորստի կամ վնասվածքի մասին, ինչպես նաև այլ իրավիճակների մասին, որոնք խոչնդոտում են ծառայությունների մատուցմանը:

4.4. Պատվիրատուն պարտավորվում է չթույլատրել երրորդ անձանց պատճենել կամ հանել տեղեկատվություն Սարքավորումից կամ նրա կազմի մեջ մտնող SIM քարտից, չպատրաստել SIM քարտի կրկնօրինակ կամ Սարքավորման համանման տարբերակ, ինչպես նաև՝ ապահովել SIM քարտի ու Սարքավորման անհասանելիությունը երրորդ անձանց:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պատվիրատուն սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ թերի կատարելու դեպքում Կատարողի առաջ պատասխանատվություն է կրում և պարտավոր է ամբողջությամբ հատուցել պատճառած վնասը: Կատարողն իրավունք ունի հնարավոր վնասներն ու կորուստը նվազեցնելու նպատակով դադարեցնել մատուցվող Ծառայությունները, միաժամանակ Պատվիրատուին տեղեկացնելով մատուցվող Ծառայությունների ընդհատման մասին, եթե Պատվիրատուի գործողություններն ակնհայտորեն ուղղված են Կատարողին կամ երրորդ անձանց վնաս հասցնելուն:

5.2. Պատվիրատուն, Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ սարքավորման(երի) կորստի, գողացված լինելու կամ այլ պատճառով բացակայության դեպքում, քանի դեռ Կատարողին գրավոր կերպով չի տեղեկացրել այդ սարքավորման սպասարկումը դադարեցնելու վերաբերյալ, կրում է այդ սարքավորման օգտագործման միջոցով մատուցվող Ծառայությունների դիմաց վճարելու պարտավորությունը:

5.3. Պատվիրատուն վճարում է տուգանք սարքավորման կորստի դեպքում սարքավորման արժեքի տվյալ պահին գործող սակագների չափով:

5.4. Պատվիրատուն սարքավորմանը իր մեղքով պատճառած վնասի համար պարտավորվում է վճարել Կատարողին՝ սարքավորման վերականգնման ամբողջ արժեքի չափով:

6. Մատուցվող ծառայությունների որակը

6.1. Կատարողը երաշխավորում է կատարվող աշխատաքների որակն այն դեպքում, երբ Պատվիրատուն պահպանում է Սարքավորման պահպանման և շահագործման վերաբերյալ պահանջները, ապահովում է Սարքավորման աշխատունակությունն ու սարքինությունը:

6.2. Պահնորդների վերահսկման ծառայությունների մատուցումը կապված է Պատվիրատուին հանձնված սարքավորման տվյալները բջջային օպերատորի GSM ցանցով փոխանցման հետ, որը ռադիոալիքների տարածման բնական պայմաններում, այդ թվում՝ շինություններին մոտ կամ նրանց ներսում, թունելներում, նկուղային կամ այլ գետնանցումային վայրերում գտնվելու, տեղանքի ռելիեֆի կամ շինության առանձնահատկություններից, մետեորոլոգիական, գեոմագնիսական և այլ պատճառներով կարող է վատանալ, ընդհատվել կամ ուղեկցվել խանգարումներով:

6.3. Կատարողը կատարվող աշխատանքների որակի համար պատասխանատվություն չի կրում այն դեպքերում, երբ որակի վատթարացումը հետևանք է երրորդ անձանց գործողությունների կամ գործունեության կամ անգործության, այդ թվում՝ բջջային օպերատորի և ինտերնետ մատուցող կազմակերպությունների ցանցերում ընդհատումների, GSM ցանցի տվյալների փոխանցման թողարկման համալարումների փոփոխման և այլ դեպքերում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ	«Լոկատոր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան,Կոմիտասի 36ա-22
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	ՀՎՀՀ 00095651
h/h 11500166513800	Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01503448	Հ/Հ՝ 1930011489910100
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	տնօրեն՝ Ա. Խաչատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«05» «04» 2018թ. կնքված
«ՄԱԱՇՁԲ-2018/3-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231215	Անվտանգության սարքերի տեղադրման աշխատանք	0	0	0	**237000**	**72000**	**72000**	**72000**	**72000**	**72000**	**72000**	**72000**	**72000**	**813000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Լոկատոր» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան,Կոմիտասի 36ա-22
ՀՎՀՀ 00095651
Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930011489910100
տնօրեն՝
Ա. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն